**Վիտամին Բ12** 01.12.2019

Վիտամին Բ12-ը կենսաբանական ակտիվ միացություն է, որն անհրաժեշտ է օրգանիզմի կենսական կարևոր ֆունկցիաների ապահովման համար: Այն հատկապես կարևոր է կյանքի առաջին տարում, քանի որ այս վիտամինի անբավարար քանակն օրգանիզմում բացասաբար է ազդում երեխայի աճի և զարգացման վրա: Կյանքի առաջին տարվա ընթացքում երեխայի օրգանիզմում Բ12 վիտամինի քանակը մեծապես կախված է հղիության ընթացքում մորից ստացած վիտամինի քանակից:

Երեխաների մոտ Բ12 վիտամինի դեֆիցիտի ախտանիշներն են.

- Անհանգիստ, մակերեսային քուն
- Մկանային թուլություն
- Պասիվություն, երեխան անտարբեր է շրջակա միջավայրի հանդեպ, չի հետաքրքրվում, չի ձգվում դեպի խաղալիքները
- Լեզվի գերզգայունություն, ցավ, ինչի հետևանքով ուտելը դառնում է տհաճ և ցավոտ պրոցես և երեխան հրաժարվում է սնունդից
- Մաշկի սփրթնածություն
- Մտավոր և ֆիզիկական զարգացման հապաղում
- Մաշկային փոփոխություններ – ցան, քոր

Ժամանակին վիտամինի դեֆիցիտը հայտնաբերելու և պակասը լրացնելու դեպքում կարգավորվում է երեխայի ուտելը, քունը, երեխան ակտիվանում է, սկսում է հետաքրքրվել շրջակա միջավայրով:

Շատ վտանգավոր է նաև գերվիտամինոզը: Եթե նույնիսկ նկատել եք նման ախտանիշներ երեխայի մոտ, առանց հետազոտվելու և բժշկի խորհրդատվության չի՛ կարելի վիտամին ընդունել:

Հայ ծնողների ակումբ

**«Հայ ծնողների ակումբ»**
Կայք՝ www.ArmParents.com
Ֆեյսբուք՝ Հայ ծնողների ակումբ
Հեռ.՝ 091 416247

BioMed

**«Բիոմեդ» ախտորոշման լաբորատորիա**
Կայք՝ www.biomed.am
Ֆեյսբուք՝ Biomed
Հասցե՝ Եղ. Թադևոսյան 5 և Գայի պողոտա 8
Հեռ.՝ 010 483879, 011 483879